Անհատույց օգտագործման պայմանագիր

ք. Երևան 28.09.2020թ.

«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն (այսուհետ՝ Փոխատու) ի դեմս՝ տնօրեն Արմեն Մանուկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն), ի դեմս՝ գլխավոր քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Միրիջանյանի (այսուհետ՝ Փոխառու), մյուս կողմից (միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ **Պայմանագիր**) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Փոխատուն պարտավորվում է Փոխառուի անհատույց օգտագործմանը հանձնել իրեն պատկանող, «Արմլեքս» ծրագիրը, որը հանդիսանում է ՀՀ դատական ատյանների և Ծառայության համագործակցության հարթակ (այսուհետ՝ Հարթակ) անհատույց հանձնում է Փոխառուի օգտագործմանը: Հարթակի և «Արմլեքս» ծրագրի նկատմամբ Փոխատուի բացառիկ (էքսկլյուզիվ) օգտագործման իրավունքը հավաստվում է «Հայհեղինակ» ՀԿ կողմից 23.03.2020-ին տրված թիվ 07/121 տեղեկանքով, ինչպես նաև 16.07.2019թ-ին Արմեն Մանուկյանի և «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված պայմանագրով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են:

1.2 Գույքի հանձնումը ձևակերպվում է հանձնման-ընդունման ակտով, որը պայմանագրի անբաժանելի մասն է:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Փոխատուն պարտավոր է՝

2.1.1 Սույն պայմանագիրը ստորագրելու պահից Փոխառուին փոխանցել Հարթակի հետ կապված անհրաժեշտ տվյալներ՝ այդ թվում փաստաթղթերը, ծրագրի կոդերը և այլ պատկանելիքներ:

2.1.2 Փոխառուին փոխանցել Հարթակի և ծրագրի տեխնիկական նկարագիրը և դրա վերաբերյալ սպառիչ կերպով, գրավոր և բանավոր պատասխանել Փոխառուի բոլոր հարցերին:

2.1.3 Հատուցել Հարթակի թերությունների հետևանքով Փոխառուին պատճառված վնասը, եթե ապացուցվում է, որ այդ թերությունները առաջացել են մինչև Հարթակը Փոխառուին հանձնելը, և Փոխատուն, դրանց մասին իմանալով, չի նախազգուշացրել Փոխառուին:

2.2 Փոխատուն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ հրաժարվել Պայմանագիրը կատարելուց՝ այդ մասին 6 ամիս առաջ ծանուցելով Փոխառուին:

2.3 Փոխառուն իրավունք ունի՝

2.3.1 Պայմանագիրն ստորագրելուց երեք օրվա ընթացքում պահանջել Փոխատուից հանձնելու Պայմանագրի 1.1 կետում նշված գույքը՝ դրա բոլոր պատկանելիքներով և փաստաթղթերով:

2.4 Փոխառուն պարտավոր է՝

2.4.1. ընդունել Հարթակը և Հարթակը պահպանել սարքին վիճակում:

3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

6.1. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե իրենց պարտավորությունների կատարումն անհնարին է եղել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել:

4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է հինգ տարի՝ մինչև 17.09.2025 թվականը:

4.2 Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Կողմերի համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքման միջոցով:

4.3 Սույն պայմանագրով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.4 Պայմանագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով կամ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.5 Պայմանագիրը կազմված է 2 (երկու) բնօրինակից՝ յուրաքանչյուր Կողմին մեկ օրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

6. Կողմերի տվյալները և ստորագրությունները

ՓՈԽԱՌՈՒ	ՓՈԽԱՏՈՒ
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	**«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ**
Ք. Երևան, Հալաբյան 41/ա	**Երևան, Դավիթ Անհաղթ 22/23**
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	**ՀՎՀՀ**
	ՀՀ
Հ/Հ 900013288023	
ՀՎՀՀ 01223338	
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.S	Կ.S